# Հայտերի ներկայացման հրավեր (ՀՆՀ)

Ամսաթիվ՝ *2015թ. մայիսի 5*
Պայմանագրի համար՝ *EIC-2.4.1-W-1*
ՀԲ վարկ համար՝ *7963- AM*
ՀԲ վարկի անվանում՝ *Էլ.- հասարակության եւ մրցունակության համար նորարարության ծրագիր*

1. Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման եւ Զարգացման Միջազգային Բանկից ստացել է վարկ *Էլ.- հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագրի* համար *եւ* նպատակ ունի միջոցների մի մասն օգտագործել *Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի /ՎՏԿ/ հիմնանորոգման պայմանագրի (թիվ EIC-2.4.1-W-1)* շրջանակում թույլատրելի վճարումների կատարման համար:

2. *ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան Ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ–ն /ԱՖԾԿԿ/* հրավիրում է ներկայացնելու կնքված Հայտեր Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի /ՎՏԿ/ հիմնանորոգման համար: *Հիմնանորոգման աշխատանքները պետք է ավարտվեն **2016թ մայիսի 31-ին**:*

3. Մրցութային փաթեթները կարող են ձեռք բերվել ստորեւ նշված հասցեում՝ յուրաքանչյուր փաթեթի համար *50,000 ՀՀ դրամ* անվերադարձ վճարի դիմաց: Վճարումները պետք է իրականացվեն ԱՖԾԿԿ-ի՝ ստորեւ նշված բանկային հաշվին: Հետաքրքրված հայտատուները կարող են հետագա տեղեկատվությունը ձեռք բերել միեւնույն հասցեով:

   *Հաշվեհամարի մանրամասներն են՝*
   *ՀՀ ֆինանսների նախարարության*
   *Կենտրոնական գանձապետարան*
   *Հաշիվ թիվ 900000900564*
   *Ստացող՝ ԱՖԾԿԿ*

4. Հայտերը ուժի մեջ կմնան Հայտերի բացման օրվանից սկսած ***120 օրվա*** ընթացքում եւ դրանց կից պետք է ներկայացվի ***Հայտի երաշխիք*** Հայտի գումարի ***2/երկու/ տոկոսի*** չափով:

5. Հետաքրքրված համապատասխանող Հայտատուները կարող են հետագա տեղեկություններ ձեռք բերել *ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ից և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորեւ նշված հասցեում տեղական ժամանակով 9:00-ից մինչեւ 18:00:*

   **Ս.թ. մայիսի 19-ին, ժամը 15:00**-ին ստորեւ նշված հասցեում տեղի կունենա նախամրցութային հանդիպում հավանական Հայտատուների հետ:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորեւ նշված հասցեով մինչեւ **ս.թ. հունիսի 2-ը, ժամը 15:00**-ը: *Հայտերի ներկայացումը էլեկտրոնային տարբերակով չի թույլատրվում*: Հայտերը ֆիզիկապես կբացվեն նույն օրը, նույն ժամին հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կնախընտրեն այցելել:

7. Որակավորման չափանիշները ներառում են՝
   - վերջին երեք տարիների (2012-2014թթ.) շինարարական աշխատանքների միջին տարեկան նվազագույն շրջանառությունը պետք է կազմի 2,000,000,000 ՀՀ դրամ,

   - Վերջին 5 տարիների ընթացքում Աշխատանքներին համարժեք առնվազն մեկ համանման բնույթի եւ բարդության շինարարություններում որպես գլխավոր կապալառու հանդես գալու փորձ,

- բոլոր կարեւոր սարքավորումների առկայությունը՝ նախանշված Ավարտման օրը Պայմանագիրն ավարտելու համար,

- Համանման բնույթի եւ ծավալի աշխատանքների իրականացման աշխատանքային 5 տարվա փորձ ունեցող Ծրագրի ղեկավար, որից 3 տարուց ոչ պակաս ղեկավարի փորձ,

- Հավանական Հայտատուի իրացվելի ակտիվների եւ/կամ առանց այլ պայմանագրային պարտավորությունների վարկային միջոցների նվազագույն գումարը պետք՝ կազմի 400,000,000 ՀՀ դրամ:

*Աշխատանքների ողջ ծավալի Նախատեսված ավարտման օրվանից շուտ կատարման համար Պատվիրատուն Կապալառուին կվճարի Պարգեւավճար, որը օրական կազմում է առանց պարգեւավճարի գումարի Պայմանագրի վերջնական գնի 0,1 տոկոս: Բոլոր աշխատանքների համար պարգեւավճարի առավելագույն գումարը կազմում է առանց պարգեւավճարի գումարի Պայմանագրի վերջնական գնի 3 /երեք/ տոկոս:*

8. Ուշացված հայտերը կմերժվեն եւ չբացված տարբերակով կվերադարձվեն Հայտատուներին:

Վերոշարադրյալի շրջանակում ներկայացվող հասցեն, որին հղում է կատարվում , հետեւյալն է.

պրն. Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
ՀՀ ֆիանանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ /ԱՖԾԿԿ/
ՀՀ ֆինանսների նախարարություն
3-րդ հարկ, Տիգրան Մեծի 4,
Երեւան 0010, Հայաստանի Հանրապետություն
Հեռ՝ (+374-11) 910 381, 910 590
Ֆաքս՝ (+374-10) 545 708
Էլ. փոստ՝info@ffpmc.am